Ի վերջոյ, երկու Պատւիրակութիւնների նախագահների ստորագրութեամբ հեռագիր տրւեց Երևան, որով առաջարկւում էր չձեռնարկել կառավարութեան և խորհրդարանի վերակազմութեան և սպասել Փարիզից ուղարկւելիք պատգամաւորներին, որոնք այդ առթիւ նոր առաջարկութիւններ էին բերելու: Հայաստանի կառավարութիւնը սիրով ընդառաջ գնաց այս առաջարկութեան:

*

Մինչ Փարիզում պատւիրակութիւնները յուզւում ու բանակցութիւններ էին վարում, Հայաստանում տեղի էին ունենում խորհրդարանական ընտրութիւնները, որոնք ձեռնարկւեցին Հայաստանի Խորհրդի փետր. 28-ի միջադէպից յետոյ: Մարտ 12-ին կառավարութիւնը որոշեց Խորհրդարանի ընտրութիւնների համար հիմք ընդունել համառուսական Սահմ. Ժողովի ընտրական օրէնքը Անդրկ.Առանձին Կոմիտէի մտցրած փոփոխութիւններով, ամբողջ երկիրը դարձնել մէկ ընտրական շրջան, թիւրքահայերին տալ ընտրական իրաւունք և այլն: Այս որոշման հիման վրա մշակւեց «Օրէնք Հայաստանի Պարլամենտի Ընտրութեանց», որով իւրաքանչիւր 20 տարին լրացրած քաղաքացի, առանց սեռի, կրօնի ու ցեղի խտրութեան իրաւունք ունէր մասնակցելու ընտրութիւններին, որոնք պիտի կատարւէին ընդհանուր, հաւասար, ուղղակի և համեմատական քւէարկութեամբ: Խորհրդարանի անդամների թիւը սահմանւում էր 80: Ընտրութիւնները վարելու համար ստեղծւում էին կենտրոնական, գաւառական, շրջանային, քաղաքային, գիւղական և թաղամասային ընտրական յանձնաժողովներ. կենտրոնական յանձնաժողովը նշանակւում էր Հայ. Խորհրդից, իսկ մնացածները՝ իրենցից դերադաս յանձնաժողովներից:

Հայ. Խորհուրդը նշանակեց ընտրական կենտրոնական յանձնաժողով և այս վերջինն անցաւ գործի: Նշանակեց գաւառական ընտրական յանձնաժողովներ, յանձնաժողովների նախագահներ ու ընտրական հրահանգիչներ և գաւառներն ուղարկեց ժողովրդական թերթիկներ՝ մանրամասն հրահանգներով: Ապր. 25-ից Հայաստանի բոլոր վայրերում սկսւեց ընտրողների ցուցակագրութիւնը. քւէի իրաւունք ունեցողների ընդհանուր թիւը դուրս եկաւ, առանց Կարսի և Շարուր-Նախիջևանի, 365,780 հոգի: Խորհրդարանի ընտրութիւնների համար կազմւեց հետևեալ ժամանակացոյցը.

Մայիս 12 — ընտրողների ցուցակների յայտարարման վերջնական ժամանակը:

Մայիս 22 — թեկնածուների ցանկը ներկայացնելու վերջին օրը:

Մայիս 29 — ներկայացած թեկնածուների ցանկի յայտարարութեան վերջին պայմանաժամը:

Յունիս 6 — վերջնական ժամանակը թեկնածուների ցանկ ներկայացնող ընտրողների յայտարարութեան՝ ցանկերը միացնելու մասին:

Յունիս 11 — ընտրողների ցանկերի երկրորդ յայտարարութեան վերջին օրը: